

ԹԵՄԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Իրաքահայոց Թեմի Առաջնորդի Ընտրություն

Իրաքահայոց Թեմի Ազգային Կեդրոնական Վարչությունը, պատգամատրական ընդհանուր ժողովի հրաիրեց Պաղտատի շրջաններու՝ Մուսուլի, Պասրայի, Քերքուկի եւ Զախոյի թաղականութեանց անդամները 5 եւ 6 Յունիս 1996-ին:

Չորեքշաբթի 5 Յունիս 1996-ին Ազգային Կեդրոնական Վարչութեան ատենապետը Տիար Հայկ Պօսթամեանի Տէրունական աղօթքով ժողովը բացուած յայտարարելէ ետք ընտրուեցաւ դիւանը:

Ապա, հերթաբար զեկուցումներ տրուեցան Պաղտատի Վարչութեան եւ շրջաններու թաղականութեանց, անցեալ տարուան վարչական, կրօնական, կալուածական եւ այլ հարցերու վերաբերեալ:

Իսկ, հինգշաբթի օրուան կարեւոր օրակարգն էր Թեմիս Առաջնորդի ընտրութիւնը յաջորդ չորս տարիներու համար: Թեմիս բարեխնամ առաջնորդ բարձրաշնորհ Տ. Աւագ Արքեպս. Ասատուրեանի քառամեայ առաջնորդութեան ժամանակաշրջանը լրացած ըլլալուն, ըստ համայնքիս օրէնսդրութեան, ժողովականներ հրաիրուած էին զբաղելու այս հարցով:

Ազգային Կեդրոնական Վարչութեան ատենապետը անդրադարձաւ Աւագ Արքեպսանի անցեալ 17 տարիներու ընթացքին օգտաշատ գործունէութեանց Եկեղեցւոյ պայծառութեան, Թեմիս համար քահանայ հայրերու պատրաստութեան, հոգեւոր ուսանողներու ընտրութեան, Դպրաց Դասի, Կիրակնօրեայի Հաւաքի Կազմութեան եւ վարչական հարցերու մէջ ցուցաբերած կարողութեանց, ինչպէս նաեւ Կրօնից եւ Կալուածոց Հարցերու Նախարարութեան եւ այլ համայնքներու կրօնապետներու հետ մշակած խիստ արդիւնաւէտ յարաբերութեանց:

Ապա, Պրն. Ատենապետը յայտնեց թէ Կեդրոնական Վարչութեան թեկնածուն է բարձրաշնորհ Տ. Աւագ Արքեպս. Ասատուրեանը, Արքեպսանի թեկնածութիւնը ապահովելու համար դիմած են Ամենայն Հայոց Կաթողիկոսին: Պատգամատրական ժողովը այլ թեկնածու մը չառաջարկելուն Աւագ Արքեպսանը՝ միանայնութեամբ, վերընտրուեցաւ Առաջնորդ՝ հինգերորդ անգամ ըլլալով, յաջորդ չորս տարիներու համար:

Կեդրոնական Վարչութեան դիւանին պարտականութիւն տրուեցաւ ընտրութեան արդիւնքը տեղեկացնել Արքեպսան Հօր:

Արդիւնքը նաեւ ամփոփապէս տեղեկացուեցաւ Կալուածոց եւ Կրօնից Հարցերու Նախարարին որպէսզի անոր միջոցաւ ապահովուի հանրապետական հրովարտակ:

Նոյնպէս վերընտրութեան արդիւնքը հետագրուեցաւ Ամենայն Հայոց Հայրապետին հայցելով Նորին Արքութեան Օրհմութեան Արքատառ Կոմդակը՝ առ ի հաստատում:

Ազգային Առաջնորդարանը, հոգեւոր դասը եւ համայն հաւատացեալ մեր ժողովուրդը սրտագեղօրէն կը շնորհաւորեն Արքեպսան Հայրը, մաղթելով էլ անի յաջողակ երկար տարիներ ի պայծառութիւն մեր Մայրենի Սուրբ Եկեղեցւոյ:

ԱՌԱՋԵՆՈՐԴԱՐԱՆ ԻՐԱՔԻ ՀԱՅՈՑ